ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2019 Թ. ՀՈՒՆՎԱՐԻ 10-13-Ը ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**
   Գարեգին Բաղրամյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի պաշտոնակատար

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**
   Արաբական Միացյալ Էմիրություններ (Աբու Դաբի), 2019թ. հունվարի 10-ից 13-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   Վերականգնվող էներգիայի միջազգային գործակալություն (IRENA)

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ).**
   Մասնակցել Վերականգնվող էներգետիկայի միջազգային գործակալության (IRENA) ասամբլեայի 9-րդ նստաշրջանին

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
   Քննարկվեցին՝
   Էներգիայի փոխակերպման աշխարհաքաղաքականությունը,
   Էներգախնայողության սոցիալ-տնտեսական օգուտները,
   Հիդրոէներգետիկայի դերը էներգետիկ բնագավառի փոխակերպման մեջ,
   «Փոխակերպիչ նորարարություն» թեմայով նախարարական կլոր-սեղան քննարկում,
   IRENA-ի 2019թ. աշխատանքների կազմակերպական հարցեր,
   Ներկայացվեց Վերականգնվող էներգետիկայի միջազգային գործակալության գլխավոր տնօրենի տարեկան զեկույցը,
   Ցանցին չմիացված վերականգնվող էներգետիկ աղբյուրների տեղակայումը համընդհանուր հասանելիության և կայուն զարգացման նպատակներին ընդառաջ:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**
   Քննարկվեցին կազմակերպության 2019թ. պլանները և համագործակցության ծրագրերը: Ներկայացվեցին վերականգնվող էներգետիկայի բնագավառում նորագույն տեխնոլոգիաների զարգացումները, մարտահրավերները, զարգացման խոչընդոտները: Ընդգծվեց կայուն զարգացման վրա վերականգնվող էներգետիկայի ազդեցությունը և դերը, ինչպես նաև տարբեր երկրների տեխնոլոգիական նորարարությունների ոլորտում լավագույն փորձը կիսելու և ընդհանուր կարիքներն ու առաջնահերթությունները բացահայտելու կարևորությունը:
   Հանդիպումներ, քննարկումներ տեղի ունեցան գործընկերների հետ: Մասնավորապես «AMEA POWER» ընկերության նախագահի հետ քննարկվեցին Հայաստանում վերականգնվող էներգետիկայի բնագավառում ներդրումների հնարավորությունները:

Կայացել են Վերականգնվող էներգետիկայի միջազգային գործակալության (IRENA) գլխավոր տնօրենի ընտրություններ և գլխավոր տնօրեն է ընտրվել Իտալիայի կողմից առաջադրված Ֆրանչեսկո լա Կամերան, ում սատարում էր նաև Հայաստանը:

8. <u>ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ</u>

Ընդունվեցին որոշումներ օրակարգով նախատեսված հարցերի վերաբերյալ:

9. <u>ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ</u>

Առաջարկներ հնչեցին շարունակել աշխատանքները IRENA-ի շրջանակներում:

10. <u>ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ.</u>

15 հունվարի 2019թ.